ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 447

«03» 06 2014 թ.

Ք. Երևան, Ձորափի 40
Հեռ.՝ 53-66-12, ֆաքս՝ 53-92-53

Հավելված 1
N ՇԲՕ-14/4-ԳԱԿ-ՇՀՁԲ-11/9 ծածկագրով
ընթացակարգի հրավերի

Ընկերության տնօրեններին

«ՇԲՕ-14/4-ԳԱԿ-ՇՀՁԲ-11/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր ընկերության միջև կնքված N ՇՀՁԲ-11/9 շրջանակային համաձայնագրով նախատեսված Ծառայությունները: Ծառայությունների մատուցման պայմաններն են **բուժսարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների** գնումը:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ը՝ ք.Երևան, Ձորափի 40 հասցեով, ընկերության գնումները համակարգող՝ Լ.Ալեքսանյանին, մինչև 2014թ. հունիսի 13-ը, ժամը 12:00-ն:

Հայտերը կբացվեն «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի շենքում, Ձորափի 40 հասցեով, 2014թ. հունիսի 13-ին, ժամը 12:00-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՇԲՕ-14/4-ԳԱԿ-ՇՀՁԲ-11/9» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Տնօրեն՝ Թ.Ստեփանյան